№ 38 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 1 — 1897 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 1 № 38

ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՇԱԿ“

(25-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1897 ԹԻԱԿԱՆԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Տարեկան գինը՝ 10 բուբլի, կէս տարվանը՝ 6 բուբլի

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction «MSCHAK»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մաքուր գործողներ. Կատարածից աղատված որբերի խնամատարութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դանիական յանձնաժողովի նամակը. Պատասխանի փոխարէն. Հայոց թատրոն. Մասենագրութիւն. Գրական բարքերից. Նամակ Վաղարշապատից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Պարսկաստանից.

ՄԱՔՈՒՐ ԳՈՐԾՈՂՆԵՐ

—

Խնամական թուականներից սկսած, երբ մեր համարեա բոլոր ազգային-հասարակական հիմնարկութիւնները, երկար, բայց ամենիւ կուրից յետոյ անցան մեր կուսակցութեան ձեռքը, հաստատվեց շատ որոշ և հիմնական մի սկզբունք.—յանձնել այդ հիմնարկութիւնների ղեկը այնպիսի մարդկանց, որոնք ոչ թէ միայն իրանց եռանդով և աշխատութեամբ կարող են օգտաւէտ լինել հիմնարկութեան, այլ և որոնք, իբրև մաքուր մարդիկ, արատ չեն բերի այդ հիմնարկութեանը, և այդպիսով կրթիչ օրինակ կը թողնեն ժողովրդի վրա:

Դաղանիք չէ ոչ ոքի համար, որ մեր հասարակական փոքրիկ կեանքի մէջ, դիցուք մի Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան, կամ Բարեգործական և Հրատարակչական ընկերութիւնների վարչութեան անդամների ընտրութիւնը՝ բացի լոկ պաշտօնատար անձանց ընտրութիւն լինելուց, մի և նոյն ժամանակ մի ատատատացիա է մեր հասարակական գործիչների համար, և մի շիօլա այն բոլոր մարդկանց համար, որոնք կամենում են ոտք դնել հասարակական գործունէութեան ասպարէզի վրա: Եթէ սրանից հինգ տարի առաջ կաթողիկոսական պատգամաւորների ընտրութեան ժամանակ, մի ահագին կուսակցութիւն, բուռն ոգևորութեամբ առաջ մղեց Գրիգոր Արծրունու պատգամաւորական թեկնածութիւնը, այդ մի կողմից համակրութիւն էր դէպի այն կաթողիկոսական թեկնածուները, որոնց նա աչքի առաջ ունէր, իսկ միւս կողմից հրապարակական ատատատացիա այն մաքուր, անարատ գործունէութեան, որ Արծրունին ցոյց էր տուել 25 տարվայ ընթացքում: Վերջապէս վերցրէք Բարեգործական և Հրատարակչական ընկերութիւնների ընտրութիւնները, որ պարբերաբար ամեն տարի տեղի են ունենում: Այդ բոլոր ընտրութիւնների ժամանակ էլ՝ լոգիկական հետևողութեամբ առաջ է մղվում նոյն հիմնական սկզբունքը.—ընտրել ոչ միայն եռանդոտ, այլ և մաքուր մարդիկ, հեռացնել ոչ միայն անընդունակ և թոյլ անդամներին, այլ և այն պաշտօնեաներին, որոնք թէև իրանց պաշտօնի մէջ եռանդոտ են և հմուտ, բայց իբրև մարդիկ, մէկը դրական ասպարիզում, միւսը հասարակական գործերում, երրորդը իբր քաղաքացի, արատաւորված են, մաքուր գործողներ չեն, և ուրեմն անարժան հասարակական հիմնարկութեան ղեկավար լինելու...

Մենք չենք թաղցնում, որ դիցուք Հրատարակչական ընկերութեան համար՝ մեր դրական ասպարիզում գործողներից այս և այն անձը նոյնպէս օգտաւէտ կը լինէին, ինչպէս և նրանք, որոնք ընտրվում են, բայց և այնպէս դրանց առաջ փակվում են ընկերութեան դռները այն պատճառով, որ այդ դրական գործիչներից մէկը կամ միւսը յայտնի են իբրև անբարեխիղճ գործողներ, իբրև այնպիսի դրականագէտներ, որոնք ներկայացուցիչ չեն դրական մաքրութեան և ազնիւ ուղղութեան, այլ ընդհակառակը դրական կեղտի տարածողներ են և ուրեմն նրանց ընտրութիւնը մի դրական հիմնարկութեան մէջ ոչինչ բարոյակրթիչ ազդեցութիւն չէ կարող տալ: Նոյնը կարող ենք ասել և Բարեգործական ընկերութեան մասին: Երբ մեր հասարակութեան մէջ յայտնի շատ անձինք դուրս են քշվում այդ հիմնարկութիւնից և չեն ընտրվում, այդ միայն այն պատճառով, որ իրանց ընդունակութեան հետ միասին նրանք չունեն մաքուր անուն, այլ այնքան արատաւորված են, որ արժանի են միշտ դուրսը մնալու պատժին...

Ահա այդ է եղել այն հիմնական սկզբունքը, այն ղեկավարող հայեցակէտը, որին հետևում է մեր կուսակցութիւնը՝ ընտրութիւններ անելիս, և մէկի կամ միւսի հասարակական արժանաւորութիւնը դատելիս: Այդ ուղղութիւնը բացի մեր հիմնարկութիւններին օգուտ տալուց, մի և նոյն ժամանակ կրթիչ և դաստիարակիչ ազդեցութիւն է թողնում ժողովրդի վրա:

Մենք ուզում ենք, որ մեր բոլոր գործողները, լինեն դրանք դրական, հասարակական, թէ թատրոնական գործիչներ, լինեն դրանք կին-գործողներ, թէ հոգևորական—գործողներ, իրանց եռանդի և ուղղութեան հետ միացնեն անպայման մաքրութիւն, անարատ պահեն իրանց անունը: Անմաքուր, արատաւորված դրողը, արատաւորված հասարակական գործիչը, անմաքուր հոգևորականը պէտք է յետ մղվի ասպարէզից: Անուններ չենք տալիս, որովհետև Nomina sunt odiosa.

ԿՈՏՈՐԱԾԻՑ ԱԶԱՏՎԱԾ ՈՐԲԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

—

Մենք պարբերաբար հաղորդում ենք, թէ որտեղ և ինչ մարդկանց ձեռքով որբանոցներ են բացվում հայկական կոտորածներից աղատված երեխաներին խնամելու համար: Ընթերցողները արդէն բաւական ծանօթ են այդ գործին: Այժմ հաղորդում ենք էլի մի քանի տեղեկութիւն՝ առնելով կ. Պոլսի լրագիրներից.

«Քաղաքական ժողովը կը զբաղի՝ յատուկ յանձնաժողովոյ մը ձեռօք կարօտելոց նպատակ հայթայթելու և միանգամայն որբոց խնամատարութեան խնդիրներով. մտադիր է՝ գաւառներէն 100 որբ տղաքներ բերել տալ, որպէս զի ազգային հիւանդանոցի Որբանոցին մէջ պատսպարվին և արհեստ սովրին:

«Պատրիարքարանը գաւառային առաջնորդութեանց, ինչպէս և Եւրոպայոյ և Ամերիկայի հայ գաղթականութեանց շրջաբերական մը պատուիրեց հոգ տանիլ, որպէս զի որբեր որդեգրող օտար հաստատութեանց մէջ հայոց եկեղեցւոյ դաւակներ հայերէն սովրին, հայ եկեղեցւոյ դաւանութեան մէջ մեծնան և եկեղեցական պաշտամունք վայելեն: Առաջնորդութիւնք և գաղթականութիւնք պարտին խնամով արձանագրել և հետզհետէ Պատրիարքարանի ղեկուցանել թէ իւրաքանչիւր օտար որբանոցի հան-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թէհրան, մարտի 13-ին

Պարսիկները երկու նշանաւոր քաղաքական ծոներ ունեն, մէկը վեհ. Շահի ծննդեան տարեդարձն է, միւսը Նեվրուզը Սուլթանիա (արքայական ամանոր), որոնց ժամանակ Շահը իր պալատում երկու տեսակ պաշտօնական սէլամ (ողջոյն) է կատարում: Առաջինը «թախտը մեարմեար» կոչված տեղը, ուր գտնվում է մարմարիոնի դեղեցիկ քանդակագործ դահը. այդ սենեակը երեք պատ ունի, չորրորդի տեղը բաց է և նայում է դէպի պարտէզ: Շահը բազմում է մարմարիոնի դահի վրա և ընդունում միաժամանակ մինիստրներին և բոլոր փոքր ի շատէ աչքի ընկնող պարսիկ պաշտօնեաներին: Ընդունելութիւնը սկվելուց թնդանօթներ են արձակում: Երկրորդ սէլամը կատարվում է մի այլ սենեակում և կոչվում է «Սէլամը-խաս», որի ժամանակ ընդունվում է բոլոր օտար դիպլոմատիական մարմինը (դեսպանները իրանց ատորագրեալներով): Մի օր առաջ Շահի արարողապետը՝ Զէհիրի Դովլան պաշտօնական թղթերով հրաւիրում է դեսպաններին ներկայանալ Շահին: Պաշտօնական գրութիւնները անձնական կնիքներով են դրոշմվում՝ ատորագրութիւն տեղի չէ ունենում:

Պէտք է ի նկատի ունենալ, որ մինչև այժմ սէլամի խնդրում դիպլոմատիական մարմնի մէջ չէր մտած հայերի հոգևոր ներկայացուցիչը: Սակայն վերին ատաճանի մխիթարական երեւոյթ է, որ այս անգամ (մարտի 9-ին), չնորհիւ արտաքին գործերի մինիստր Մուշիրի Դովլէյի՝ Պարսկաստանի և Հնդկաստանի հայոց առաջնորդական տեղապահն էլ Շահի արարողապետի կողմից հրաւիրվեց պաշտօնական սէլամի: Սա մի նոր և նշանաւոր իրաւունք է, որ չնորհվում է հայերին:

Մարտի 9-ին, առաւօտեան ժամը 11-ին ներկայացան վեհ. Շահին բոլոր դեսպանները իրանց պաշտօնական մարմիններով: Արտաքին գործերի մինիստրը և արարողապետը առաջնորդում էին դեսպաններին դէպի Շահի սալօնը: Սալօնում առաջին կարգը բռնում են դեսպանները, իսկ նրանց յետև իրանց ատորագրեալները: Պարսկաստանի դեսպանների մէջ աւագը օսմանեան դեսպանն է, համաձայն իր ատաճանի, միւսները մինիստր-դեսպաններ են և ոչ իսկական դեսպաններ: Ի միջի այլոց հետաքրքիր է և այն, որ պարսից կառավարութիւնն էլ իր կողմից օտար պետութիւնների մօտ մինիստր-դեսպաններ է նշանակում, ի բաց առեալ Թիւրքիան.—Կ. Պոլսում գտնվում է պարսից դեսպան: Օսմանեան դեսպանը իբրև աւագ չնորհաւորում է Շահի նոր տարին: Ընդունված է չնորհաւորել ֆրանսերէն լեզուով, իբրև բոլոր դեսպանների համար հասկանալի լեզու, սակայն հակառակ քաղաքավարական կանոնների, օսմանեան դեսպանը, չը գիտենք ինչից դրդված, պարսկերէն լեզուով է չնորհաւորել վեհ. Շահին:

Թիւրքաց դեսպանի այդ վարմունքը միանգամայն վատ տպաւորութիւն է թողել միւս դեսպանների վրա, որոնցից շատերը չը հասկանալով պարսից լեզուն, տարակուսանքի մէջն էին, թէ որքան սուլթանի դեսպանը պատշաճ ձևով է արտայայտել իրանց զգայմունքները...

Ընկնդրութիւնը տևեց 2 րոպէ:

Ապա առանձնապէս պիտի ներկայանար Պարսկաստանի և Հնդկաստանի հայոց առաջնորդական տեղապահ Սահակ ծ. վարդապետ Այվազեանց: Հայոց հոգևոր ներկայացուցչին պալատի արտաքին դրան մօտ դիմաւորեցին մի խումբ ֆարրաշներ, որոնք առաջ ընկած հասցրին նրան մինչև ներքին պարսպի դուռը: Այդտեղից ուրիշ կարգի ատաճանաւորներ դիմաւորելով՝ առաջնորդեցին մինչև բուն պալատի չէնքի մեծ դուռը: Այդտեղից էլ հայր սուրբին առաջնորդեցին արարողապետի իշխանութեան տակ գտնվող պալատական ծառայողները մինչև ընդունարանի սրահը: Ընդունարանի սրահում դիմաւորեցին ներքին գործերի մինիստր և արարողապետը: Երբ արարողապետը Շահին իմաց տուեց՝ փոխանորդ հայրը, առաջնորդութեամբ արտաքին գործերի մինիստրի և արարողապետի, ներկայացաւ վեհ. Շահին: Պաշտօնական թարգման նշանակված էր Ցովհաննէս խան Մաւէհեանց: Վեհ. Շահը դիմաւորեց փոխանորդ հօրը հետևեալ հարցով. «Խալիֆայի առողջութիւնը հարցրէք, թէ ինչպէս կանցնի իրան համար Թէհրանում:» Հայր սուրբը պատասխանեց. «Նորին վեհափառութեան առիս ունեցած բարեհաճութեան չնորհիւ երջանիկ եմք և միշտ աղօթարար իր թանգագին արքայական կենաց համար»: Վեհ. Շահը յայտնեց. «Ուրախ եմ որ իմ թագաւորութեանս մէջ ապրող հայերը խաղաղ և հանդիստ են, կաշխատեն և ապահով են. չնորհակալ եմ հայերից. միշտ իմ արքայական պաշտպանութեանս ներքև պիտի պահեմ»:

Դրան հետևեց վարդապետի պատասխանը—«Պարսկահայերը արժանի համարած են Նորին Վեհափառութեան պաշտպանութիւնը, վասն որոյ անհունս մխիթարեալ են, ահա այսօր ևս զիս բարեբաղդ կը համարիմ Նեվրուզի Սուլթանիի ատենին ինձ չնորհեալ ունկնդրութեան առթիւ, ի դիմաց Պարսկահայերի չնորհաւորելով արքայական ամանորը, ամենահպատակօրէն հայ ժողովրդի հաւատարմական զգացումները մատուցանելով առ Նորին Վեհափառութիւնը: Կաղօթենք առ բարձրեալն Աստուած, որ պարգևէ կատարեալ առողջ ու երկար կեանք մեր սիրելի թագաւորին»:

Վեհ. Շահը աւելացրեց—«Հայ ժողովրդից չնորհակալ եմ և իմ արքայական պաշտպանութիւնս կը նաւիրեմ իրենց»: Այդ խօսքերին Այվազեան պատասխանեց. «Հայ ժողովուրդը իր հաւատարմօրէն գործունէութեամբ միշտ պիտի աշխատի արժանի լինել Նորին արքայական պաշտպանութեանը»:

Ապա տալով հրաժեշտի ողջոյնը, նոյն ձևով, ինչպէս ընդունվել էր, հայր սուրբին ճանապարհ ձրգեցին: Ընկնդրութիւնը տևեց մօտ 6 րոպէ: Զը նայած վեհ. Շահի ծանր հիւանդութեան, որ զբաղարութեամբ կարողանում էր ոտի վրա կանգնել, հայոց առաջնորդական փոխանորդի ընդունելութիւնը միանգամայն սիրալիր և անկեղծ էր:

Գ. Պապկանց

տատութեան մէջ որչափ հայ որբեր ընդունուած են, որ տեղերէ և որոց զաւակ են, և այլն։

«Էրզրումի մօտ Հինձքի Կարմիր վանքին վանահայր Կորիւն վրդ. Էլիտրեմեան պատրաստականութիւն յայտներ է նոյն վանքին մէջ փոքրիկ Որբանոց մը կազմակերպելու։

«Ի Ռաքանաղի (Խալիա) Պորկէղէ իշխանուհին բաներ է 100 հայ որբերու համար Որբանոց մը, և արդէն որբերուն մեծ մասը բերել տուեր է։ Վենետիկի Մխիթարեան Միաբանութենէն քաջահմուտ վարդապետ մը, որ երկար ժամանակ ի Պոլիս Սեղբոս Խան գրաստեի պաշտօնը վարած էր, և Խարբերդէ բերուած ուրիշ երկու ուսուցիչներ այս որբերուն հայերէնի և կրօնի դասեր տալու պաշտօնն ունին։ Խալերէնի ուսումը պարտաւորիչ է, ըստ որում ուրիշ ամէն ուսումներ խալերէն կաւանդուին։ Մինչև 21 տարեկան պիտի ուսնին, և ապա Թուրքիա պիտի դառնան։ Հայ որբուհիներու համար դատ հաստատութիւն մը պիտի կազմակերպուի հոն, և երկու հայ մայրապետներու պիտի յանձնուի հայերէնի և կրօնի ուսուցման հոգը։»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՆԻԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱՄԱԿԸ

Մենք արդէն հաղորդեցինք, որ Կոպէնհագէնում, Դանիայի թագուհու հովանաւորութեան ներքոյ, մի յանձնաժողով է կազմված՝ գաղթական հայերի օգտին հանգանակութիւն անելու նպատակով և այդ յանձնաժողովը դիմել է Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան խորհրդին, առաջարկելով ստանալ 14,000 ֆրանկ և բաժանել գաղթականներին։ Հարկաւոր ենք համարում ամբողջութեամբ առաջ բերել այստեղ նամակի թարգմանութիւնը։ (Նա գրված է ֆրանսերէն)։

Կոպէնհագէն, Թագաւոր Գէորգի պալատ,
25 մարտի, 1897.

«Պարոն Ա. Անանեան, նախագահ Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան.

«1896 թի դեկտեմբեր ամսում Դանիայում կազմվել է մի յանձնաժողով, որի նպատակն է դրամական օգնութիւն խնդրել, որպէս զի դանիական ազգը կարողանայ մի քիչ նպաստել՝ թեթևացնելու համար ձեր այն հայրենակիցների ողբալի վիճակը, որոնք վռնտվել են դեռ ևս թիւրքերի բարբարոս տիրապետութեան տակ գտնվող Հայաստանի մէջ տեղի ունեցած տմարդի կոտորածների պատճառով։ Այդ յանձնաժողովը գործում է Զէլանդիայի եպիսկոպոս գոկտոր Բօրտամի նախագահութեամբ և ստորագրեալս վարում եմ դանձապահի պաշտօնը։ Մեր նպատակն է այն հանգանակութիւնների օգնութեամբ, որ մենք կը ստանանք—և, փառք Աստուծու, մենք մեծ համակրութիւն ենք գտել մեր հայրենիքում այդ թշուառների համար—սփոփել ամենից առաջ այն հայերին, որոնք ազատել են իրանց կեանքը և ապաստան գտել ուրիշ երկիրներում, որտեղ գտնվում են այժմ, զրկված ամեն բանից, ողբալի վիճակի մէջ։ Մեր հոչակաւոր հայրենակից, պետական խորհրդական Թէոդոր Լանգէից, որ Դանիայի հիւպատոսն է Մոսկվայում, իմանալով, որ Թիֆլիսում դոյութիւն ունի հայոց բարեգործական մի ընկերութիւն, որի յարգելի նախագահն էք դուք, պարոն, ես հաճութիւն ունեմ, յանձնաժողովի անունից, հարցնել ձեզ, արդեօք դուք տրամադիր էք ստանալ մի գումար, որ ձեզ կը փոխադրվի Թիֆլիսի առևտրական բանկի միջոցով, և գործադրել բաժանելով այն, ըստ ձեր բարեհայեցողութեան, այն հայերին, որոնք ազատվել են կոտորածից և այժմ գտնվում են Կովկասում չքաւոր դրութեան մէջ։

«Իմանալով, որ պօստը այստեղից Թիֆլիս երկար ժամանակի պէտք ունի, ես չատ երախտապարտ կը լինեի ձեզ, եթէ հաճէիք պատասխանել, ինչքան կարելի է շուտ, որպէս զի ես կարողանամ իր ժամանակին հարկաւոր տեղեկութիւններն անել. նոյնպէս չատ շնորհակալ կը լինէի եթէ ինձ տեղեկութիւններ տայիք այն սկզբունքների մասին, որոնցով պէտք է ղեկավարվէք այն դէպքում, եթէ յաժարէք բաժանել Դանիայի փողը, որ մօտ 14,000 ֆրանկ է։

«Վերջացնում եմ, սիրելի պարոն, արտայայտելով ձեզ ամենախորին համակրութիւն այն թշուառութիւնների համար, որոնց ենթակայ են եղել ձեր խեղճ եղբայրները և քոյրերը Հայաստանում։ Ես տանջվել եմ նրանց հետ և կը տանջվեմ նրանց հետ, աղօթելով Աստուծուն հաճիլ իր զթութեամբ չուտով վերջ դնել այդ անլուր սարսափներին։

Ձեր անձնուէր՝

Պետական խորհրդական և Նորին վեհափառութեան Դանիայի թագուհու կաբինէտի քարտուղար

Ս. Հէնինգս

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ

Պ. Ղազարոս Աղայեանցին

—

Դուք ապեցիք մի փոքրիկ յօդուած Հրատարակչական ընկերութեան ընտրութիւնների առիթով, իբր պատասխան «Մշակի» աշխատակից պ. Գրիգին, բայց, տարաղդաբար, այնպիսի թերթի մէջ, և շրջապատված այնպիսի անուններով, որ մեզ զրկում էք հնարաւորութիւնից ձեզ պատասխանելու։

Ձեզ հետ, մենք ամենայն ուրախութեամբ բանակռիւ կը մղէինք որ և է հասարակական խնդրի և ներկայ դէպքում Հրատարակչական ընկերութեան ընտրութիւնների մի քանի կէտերը պարզելու համար։

Սակայն դուք չատ լաւ գիտէք, որ մենք վաղուց դադարել ենք բանակռիւ մղել այն թերթերի և այն դրողների դէմ, որոնք իրը դատաւճռներ գրական մաքրութեան, արժանի չեն ոչ լուրջ ուշադրութեան, ոչ էլ լուրջ պատասխանի։ Փաստերը ձեր առաջ են։ Ուստի, եթէ կամենում էք՝ որ մենք հնարաւորութիւն ունենանք ձեզ պատասխանելու, բարեհաճեցէք ազատել մեզ այդ արգելքներից։ «Մշակի» էջերը, ինչպէս, մինչև այժմ, սրանից յետոյ էլ բաց կը լինեն ձեր առաջ, ազնիւ պոլէմիկայի համար, եթէ մինչև անգամ այդ պոլէմիկան լինի չատ խիստ և թշնամական։

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

—

Կիրակի, մարտի 30-ին, հայոց դերասանական խումբը յօդուտ գաղթականների ներկայացրեց «Ոճրագործի ընտանիքը»։ Ներկայացմանը մասնակցում էին և այն դերասանները, որոնք սեղմին բացակայ էին Թիֆլիսից։ Մի կողմից նպատակը, միւս կողմից մասնակցողները մեզ իրաւունք էին տալիս կարծելու, որ թատրոնը եթէ ոչ բոլորովին, գոնէ կիսով չափ լի կը լինէր. բայց դաւելով պէտք է ասենք, որ թատրոնում չատ քիչ մարդ կար և եթէ այդ քիչից՝ կէսն էլ հանենք իբրև սովորական ձրի այցելուներ, չատ քիչ բան կը մնայ։ Դա պատիւ չէ բերում Թիֆլիսի հայ հասարակութեանը, այն հասարակութեանը՝ որը սեղմնի ընթացքում հասարակ ներկայացումներին դրանից աւելի մեծ թիւով է յաճախել։ Մեզ մնում է այդ հանգամանքը բացատրել հետևեալ կերպով. նախ, որ դերասանները չատ անյարմար ժամանակ տուին իրանց ներկայացումը, որովհետև երկու օր առաջ նոյն նպատակով տիրողների ներկայացում կար, և բացի դրանից նրանք առաջուց պէտք է յայտարարէին թէ ափիշներով և թէ լրագիրների միջոցով։ Օրինակ «Մշակի» մէջ այդ ներկայացման մասին յայտարարութիւն չէր տրված։

Դալով խաղին, պէտք է ասել որ ընդհանրապէս չատ լաւ անցաւ, աջողութեանը նպաստում էր, ի հարկէ պիէսը, որը չատ քիչ գործող անձինք ունի և այդ երեկոյեան էլ դերերը բաժանված էին չատ աջող։ Գլխաւոր դերը՝ Կօրրադօ՝ կատարում էր պ. Աբէլեան, որը չը նայած հասարակութեան բացակայութեանը, մի հանգամանք, որը չատ վատ է ազդում դերակատարի վրա, չատ լաւ և զգացմունքով կատարեց, մանաւանդ վերջին տեսարանը։ Լաւ էին նոյնպէս տ. Զաբէլ՝ Բօղալիայի դերում և տիկ. Մելիքեան—Լմմա, մանաւանդ երկրորդը, վերջին տեսարանի մէջ. լաւ էին և մնացած դերակատարները՝ պ. Ֆարոն-Սարգսեան—մօնսէնիօր, պ. Յարութիւնեան—բժիշկ և պ. Մամիկոնեան՝—Դոն Ֆերնանդօ։

Վերջումը խաղացին մի վոդեվիլ՝ «Խօլերա»։

Ալ. Մուրադբէգեան։

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

Ամերիկայի Բոստոն քաղաքում հրատարակվող նշանաւոր «Arena» ամսագրի մարտի համարում տպված է Մ. Գիւլեզեանի յօդուածը հայ գաղթականների մասին։ Հեղինակի ասելով, Կ. Պոլսի կոտորածից յետոյ թիւրքայ մայրաքաղաքից մի քանի տասնեակ հազար հայեր գաղթեցին զանազան կողմեր։ Նրանցից մօտ 12,000 անձ ապաստան գտան Բոլգարիայում, 1000 անձ Ալէքսանդրիայում և Եգիպտոսի միւս տեղերում, 800 անձ Յունաստանում, մի քանի հարիւր անձ Մարսէյլում և Ֆրանսիայի միւս տեղերում։ Փախստականների մի մասն էլ հասաւ Ամերիկա, որտեղ նրանց ընդունելու համար տեղացի հայերը պատրաստութիւններ տեսան և աշխատեցին պատսպարել նրանց։ Գիւլեզեանի աջակցութեամբ գաղթականներին մի հանդիսաւոր ճաշ տրվեց, որին մասնակցեցին 225 անձ։ Ամերիկայի նշանաւոր գործող օրիորդ Էլիս Բլէքուէլ իր սրտին մօտ առնելով գաղթականների վիճակը, սկզբից իսկ ամենամեծ համակրութեամբ վերաբերվեց գաղթականներին օգնելու գործին։ Յօդուածին կցված են մի քանի պատկերներ, որոնցից մէկը ճաչկերոյթի նկարն է, իսկ միւսները նեկայացնում են Գիւլեզեանի, հայուհի օրիորդ Բուլգուջուի, մանուկ Մարգարիտ Գիւլեզեանի, գոկտոր Գեղասարկեանի և Այնթապի ուսուցչապետ Խաչատուրեանի լուսանկարները։

Ք.

ԳՐԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԻՑ

(Շարունակութիւն)

—

1890-ին ես ձեզ տուի վեց հատ յօդուածներ, որոնցից մէկը չը տպեցիք, ինչպէս այժմ յայտնում էք՝ այն պատճառով որ վատ էր, մութ, անհասկանալի։—Այդ չը տպված յօդուածի առիթով դուք, պարոն, մի անուներելի մեղք էք գործում, որի անունն է անբարեխղճութիւն։ Դուք Մէֆիստոֆէլեան չարամիտութեամբ մի քանի անգամ չեչտում էք թէ իմ յօդուածը յատկապէս «Մշակի» դէմ էր, Գրիգոր Արծրունու «Մշակի» դէմ և այն էլ գրված հանդուցեալ հրատարակիսօսի «Մուրճի» վերաբերմամբ բռնած ընթացքի առիթով։

Ձեր դժբաղդութիւնից այդ յօդուածը չէ կորել և այժմ էլ գտնվում է ինձ մօտ։ Բայց նախ դառնում եմ ձեր լոգիկային։ Ինչու ես պիտի գրէի Արծրունու դէմ, քանի որ դուք ամենայն հնազանդութեամբ կլանում էիք նրա դառն պիլիւները և ծպուտ անգամ չէիք հանում։ Ասենք մեղաւորը ձեզ վրա տիրող իսամակալութիւնն էր, որ չէր թոյլ տալիս ձեզ մոռանալ ձեր չափն ու սահմանը. բայց մենք ինչ կարող էինք այդ մասին իմանալ դատաւում։

Ես նորից կարդացի այդ յօդուածը և այժմ միայն հասկացայ, որ դուք կատարեալ իրաւունք ունէիք նրան չը տպագրելու, որովհետև... եթէ տպէիք, դուրս կը գար, որ դուք ձեր ձեռքով ծեծում էք ձեզ։—Այդ յօդուածում ես յարձակվում եմ այն մարդկանց դէմ, որոնք կարծում են թէ իրանցով է սկսվում ամեն ինչ, որոնք անտես են առնում իրանցից առաջ եղած գործիչներին, որոնք ոչինչ չարած՝ ուզում են անմահանալ պատմութեան մէջ։ Սարսափելի է, պ. Արասխանեան, չէ՞։—Ես խօսում եմ գաղափարական կուսակցութեան անհրաժեշտութեան մասին և դատափետում եմ այն կուսակցական նեղ, փողոցային ձեը, որ ամբոխի ստոր զգացմունքներին է դոնացում տալիս։ Սա նշանակում է թէ ես Արծրունու դէմ էի գրում։ Ես ծաղրում եմ մտավախութիւնը։ Մինթէ Արծրունին մտավախ էր։ Ես զղջանք եմ յայտնում նրանց, որոնք, չը կարողանալով գաղափարական կռիւ մղել, մի գլուխ աղաղակում են թէ քանդեցին, աւերեցին։ Մինթէ սա «Մշակի» դէմ է։ Ես բողոքում եմ այն բանի դէմ, որ Ստեփաննոս Նազարեանցի, Բաֆֆիի նման գործիչների մասին մեր գրականութեան մէջ որքան հայհոյանք, որքան անուանարկութիւն ուզէք, կարող էք գտնել, բայց հիշդ, արդարացի, անկողմնապահ ուսումնասիրութիւն չը կայ։ Դուք կարծում էք թէ սա ուղղված էր Արծրունու դէմ։

Բայց ինչ երկարացնել. յօդուածը, կրկնում եմ, այժմ էլ կայ և ցոյց է տալիս, որ դուք ընդունակ էք նոյն իսկ աղաւաղել իրողութիւնները, անբարեխղճութեամբ վարվել փաստերի հետ։

Վեց տարի անցնելուց յետոյ դուք մխիթարական էք համարում յայտարարել, որ ես նեղացած էի «Մուրճից»՝ այդ յօդուածը չը տպագրելու պատճառով։ Ոչ մի գրական մարդ չի նեղանայ այդպիսի հանգամանքից. յօդուած չընդունելը սովորական բան է։ Դրանից առաջ դուք չէիք ընդունել իմ «Դաւիթ և Մէնր» աշխատութիւնը, որ տպվեց առանձին և ձեր «Մուրճի» գովասանքներն ստացաւ։—Միամիտ մի ձեանաք։ Նեղանալու պատճառը ուրիշ էր։ Ահա ձեր գրածը. «Բաժանորդագրութեան ամիսներն են, ուրեմն և ինձ համար ամենատիպուկ ամիսները։ Եւ փոխանակ որ «Մուրճի» մօտ աշխատակիցները այդ խնդիրը իրանց սրտի մօտիկ առնեն և ոչ միայն իմ, այլ և իրանց գործ համարեն,—ընդհակառակը, դուք աւելի զբաղված էք ձեր մի յօդուածի ճակատագրով։ Առաջնակարգ խնդիրը մոռանում էք—մի յօդուածի համար։ Այն տրամադրութեամբ, որով դուք գրել էք նամակը, ով կարող էր իրախուսվել ձեզանից։ Բնական է որ «Մուրճից» ձեր մօտիկ քաղաքացիները գուցէ և խորշէին, տեսնելով նրա աշխատակցի այդպիսի տրամադրութիւնը և այդպիսի հայեացքը «Մուրճի» մասին... Հասարակութեան տրամադրութիւնն էլ չատ և չատ է կախված այն համակրանքից և այն հաւատից, որ ունեն նրա ինտելիգենտ անդամները դէպի մի որ և իցէ օրգան։ Եւ ես ձեզ համարել եմ և համարում եմ այդ ինտելիգենտներից։ Արդ, ձեր նամակից պարզ երևում է, որ դուք բաւականաչափ հաւատ չունիք դէպի «Մուրճը» կամ աւելի պարզ ասած՝ դէպի ինձ։։—Սխալված չէիք։ Ինչ հաւատ կարելի է ընծայել մի խմբագրի, որ «հայկական լաւագոյն գործիչ» անունով է չողոքորթում բաժանորդագրութիւն գտնելու համար։ Ինչ կարելի է սպասել մի խմբագրից, որի համար առաջ բաժանորդագրական անդորրագիրն է և ապա յօդուածը։ Դուք, պ. Արասխանեան, ինձ չափազանց էիք ձանձրացրել ձեր բաժանորդագրական ցաւերով։ Դուք ձեր գովասանքներով ուզում էիք սարսեցնել, որ ես ձեր անդորրագրերը ձեռքիս դռնէ դուռն ընկնեմ և 10 բուբլիներ մուրամ ձեզ համար։ Դուք այն ասոիճանին հասցրիք, որ սկսեցիք ենթադրել թէ ես ձեզ դէմ պրօպագանդա եմ անում Շուշու ձեր երկու ջուխտ բաժանորդների մէջ։ Դրան ասում են համը տանել։ Ես այլ ես չէի կարող ձեզ պէս խմբագրի հետ գործ ունենալ, ուստի ոչինչ ուշադրութիւն չը դարձնելով ձեր չողոքորթութիւնների վրա, որոնցով վերջանում էր այդ նամակը, անտես արի ձեզ և այնուհետև մի տող էլ չուղարկեցի ձեզ։ Այս նամակը, որ անշուշտ ձեր գրականական գործունէութեան գարդերից մէկը կը լինի, գրված է 1891 թ. յունվարի 31-ին։ Այն օրից անցել է վեց տարի, բայց ձեր անդորրագրերը էլի ման են ածում փողոցներում... Իսկ դուք նստում էք ձեր սենեակում և գրում էք թէ «Մուրճը» մեծ և մեծ առաջադիմութիւններ է անում։ Խեղճ...

Ձեր այդ տարօրինակ, ինձ համար անհասկանալի գործունէութեան հետ իմ յարաբերութիւնները կարելուց յետոյ ես բոլորովին չէի զարմանայ եթէ դուք, իմ հասցէին այնքան չողոքորթութիւններ չուղղելուց յետոյ, սկսէիք ձեր երեխայական քինախնդրութեան նպատակ դարձնել ինձ։ Ձեր բոլոր աշխատակիցների վիճակն այդ է եղել։ Լևոն Սարգսեանին, որ մի ժամանակ ձեր պարծանքն էր, անցեալ տարի բէպօրտեօր անուանեցիք. Քալանթար, որ մի ժամանակ ձեզ համար հեղինակութիւն էր, այժմ ձեզ իսարերիկա է պատճառում։ Մի ժամանակ դուք չատպում էիք նամակներով յայտնել ամեն տեղ թէ Տիգրան Յովհաննիսեան այս ինչ բանն է պատրաստում «Մուրճի» համար, իսկ այժմ... Եւ ես բոլորովին չը զարմացայ, երբ «Մուրճի» այս տարվայ առաջին համարում դուք բարեհաճեցիք ինձ տեղ չը տալ վիպագրութեան մէջ։ Մի ուրիշ մարդ ձեզ տեղ կամայէր, յիշելով թէ առաջներում ինչ է ասել իմ մասին։ Եւ իրաւ, կարդացէք ձեր «Մուրճի» 1889 թ. երես 1823. այդտեղ դուք ինձ դնում էք Զոլայի կողքին. ձեր փառաւոր լոգիկայով այսօր դուրս է գալիս որ Զոլան «Assommoir» և «Nana» գրելիս մի յուսատու սկսնակ էր...

Երկու խօսք ևս։ 80-ական թուականներ էք կանչում և անիծում այդ շրջանը։ Դուք ասում էք, որ մեր յայտնի մատենագիրները, հրապարակախօսները 80-ական թուականների ծնունդ

են։ Էլ ով մնաց։—Չէ՞ որ միայն դուք, պ. Ա-բասխանեան. չէ՞ որ դուք էիք, որ լոյս ընկաք 80-ական թուականներին՝ նախ «Մշակում», երբ պէտք էր կուռել «Արձագանքի» դէմ և ապա «Արձագանքում», երբ կռիւ ունէիք «Մշակի» դէմ։—80-ական թուականները եթէ մի մեղ ունեն, այդ այն է, որ այն ժամանակ կերպարանք ստացաւ գրական քամելիոնութիւնը։ 1889 թուին ինչ կարծիք ունէիք «Ցարազի» մասին, ընդամենը երեք տարի առաջ «Ցարազը» տպագրում էր ձեր մասնաւոր կեանքից ծիծաղաշարժ պատկերներ, իսկ դուք այնպէս էիք յարձակվում Տիգրան Նազարեանի վրա, որ «Մշակը» հարկաւոր համարեց խրատներ տալ ձեզ և դրանով աւելի ևս կատաղեցրեց ձեզ։ Իսկ այժմ գրական քամելիոնութիւն—ահա ձեր հիմնած գրականութեան դրոշմը։

Վերջացնելով ձեր և իմ նամակների հարցը, ես անկեղծօրէն ցաւում եմ, որ դուք գոհ չը պիտի լինիք ձեր նախկին խելքից և գրածից։ Կրկնում եմ որ ես երբէք չէի հանի ձեր նամակները, եթէ դուք հարկադրած չը լինէիք։ Ես այն կարծիքին եմ, որ պէտք է բժշկել ձեր mania grandiosa-ն. և եթէ իմ ձեռքին լինէր, ես կը տայի ձեզ ամբողջ ազգի անունից մի չքեղ վկայական այն մասին թէ այն, ամեն ինչ դուք էք և «Մուրճը», և առանց ձեզ երկուսիդ ոչինչ չեղաւ որ կայ։ Գուցէ այն ժամանակ դուք հանգստանայիք և խնայէիք ձեր ընթերցողներին, և Ռօտինեանցի ապարանի տաւերը փոխանակ ձեր զովասանքներին ծառայեցնելու, աշխատէիք մի աւելի օգտակար նպատակի համար գործադրել։

Սա իմ առաջին և վերջին պատասխանն է։

Լէօ

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

Մարտի 23-ին

Դեռ երէկ Էջմիածնի օրգան «Արարատը» իրան վայել հայհոյանքներ թափեց Միսիոնարների վրա. այսօր էլ նոյնպիսի անպատկառ հայհոյանքներ է թափում հայ-բողոքականների գլխին եկեղեցու սեղանից, այն սեղանից, որտեղից հարիւրաւոր տարիներ սէր և համերաշխութիւն է քարոզվել։ Քարոզիչն այս անգամ Ս. վ. Ամատունին էր. «Սրանից 19 դար առաջ,—այսպէս սկսեց նա իր քարոզը,—Յիսուս արտավեց և վայ կարդաց Երուսաղէմին՝ նրա անբարոյականութեան համար, որն ամենքին կոբստեան անդունդն էր տանում։ Նոյն վայը այժմ ձեզ եմ կարդում ես (sic). նայեցէք չուրջներդ, որպիսի անբարոյականութիւն է տիրում այնտեղ. միթէ չուտով դուք ևս կորչելու չէք։ Մինչև երբ Աստուած հայհոյողները, այդ բողոքական-ֆարիսիօնները, անասուած, անեկեղեցի արարածները բուն դնեն ձեր մէջ (!!)։ Պէտք է և ժամանակ է դրանցից ազատվելու, եթէ չէք ուզում կորչել, ի չիք դառնալ...»։ Եւ էլի ուրիշ չատ հայհոյանքներ...։ Այս նոր Լայօլլան յուզված էր, նրա ձայնը զողզողում էր և, թափանցելով, թունաւորում էր միամիտ ամբոխի հոգին, այն ամբոխի, որին մի նոր «խաչակիրների արշաւանքի» էր հրաւիրում։ Զարմանում ենք. երբ արդեօք պէտք է վերանան մեր միջից այսպիսի խայտառակ քարոզներ։ Երբ մերոնք պէտք է հասկանան, որ ժամանակ է ատելութեան տեղ Քրիստոսի աւետարանը քարոզել։ Անչուշտ միայն այն ժամանակ, երբ բաղդ կունենանք չը տեսնելու մեր մէջ այսպիսի նեղհայեացք հոգեորականներ։ Սակայն դա էլ երազ է։ Բայց որքան զուգադիպութիւն էր ներկայացնում այսօրվայ երեկոյեան քարոզը։ Քարոզիչ Մակար եպիսկոպոսը պատմում էր Քրիստոսի տաճար մտնելը. «իմ տունը աւազակաց այր չինեցիք», ասեց Քրիստոս զուրս վռնդելով աղանդաւորներին և սեղանաւորներին։ Որպիսի զայրոյթով արդեօք պէտք է զուրս արտաքսէր Քրիստոս մեր վանքերից այսպիսի հոգեորականներին, երբ տեսնէր, որ իր սիրոյ խօսքը հայհոյանքների է փոխվել, իսկ տաճարը...

Ա. Գիւլ-Խանդանեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, մարտի 27-ին

Ցարգելի «Մշակ» լրագրի № 34-ի մէջ տպած՝ Էջմիածնի նամակը, «ետանց» ստորագրութեամբ, ամանք վերագրում են ինձ։ Թոյլ տուէք հրապարակով յայտնել, որ այդ թղթակցութեան հեղինակը ես չեմ, և աւելացնել՝ որ այդ թղթակցութեան մէջ ինձ անյայտ պարոնը ազատաղել է վեհափառ Կաթողիկոսի քարոզը։ Թող իմանան ինձ վրա կասկած ունեցողները, որ ես իբրև միաբան և ամիջական ծանօթ այսպէսի դրութեան, երբէք սխալ բան չեմ թոյլ տայ ինձ գրելու, իսկ յիշեալ քարոզի ժամանակ այնքան մօտ էի կանգնած վեհափառից, որ լսեցի ամեն մի բառը։

Աղօթարար՝

Մատթէոս աբեղայ Մատթէոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսից գրում են, որ սուլթանը չընդունեց հայոց Օրմանեան պատրիարքի հրաժարականը։ Որքան գոհ է, ուրեմն, սուլթանը, իր «խոնարհ ծառայից»։

Պետերբուրգի «Лучъ» լրագիրը, որ 1896 թ. նոյեմբերի 1-ից սկսած նոր խմբագրութեան տնօրինութեամբ կերպարանափոխ էր եղել և փողոցային թերթից դարձել մամուլի մի լուրջ, անկաշառ և անաչառ օրգան, որով և կարճ ժամանակում ձեռք բերեց նշանաւոր աջողութիւն, այժմ յայտնում է, որ ստիպված է դադարել ապրիլի 1-ից։ Դադարման պատճառը նիւթական անապահովութիւնը չէ. լրագիրը, ունենալով տասնեակ հազարաւոր բաժանորդներ, այդ կողմից միանգամայն ապահովված էր. պատճառը, ինչպէս բացատրում է հրատարակիչ Ա. Վոլֆ, այն աննպաստ պայմաններն են, որոնց մէջ գտնվում է այժմ մամուլը, որը ենթակայ է այնպիսի պատահականութիւնների, որոնց ոչ կարելի է նախատեսել և ոչ էլ նրանց առաջն առնել։

Մարտի 29-ին, Աղնուականների թատրոնում հաւաքված փոքրթիւ հասարակութեան վրա հրաշալի տպաւորութիւն թողեց Լիւմիերի կինեմատօգրաֆի առաջին սէանսը։ Հասարակութիւնը բուռն ծափահարութիւններով կրկնել տուեց համարեա բոլոր նօմերները։ Մեր ընթերցողներին խորհուրդ ենք տալիս կարդալ «Մշակի» 1896 թուի № 96 մէջ կինեմատօգրաֆին նուիրված յատուկ յօդուածը, որ բաւական գաղափար կարող է տալ անծանօթներին։ Սէանսի համարները կազմած էին չատ զանազանակերպ. բնութեան տեսարաններ, ծով, քաղաքներ, նշանաւոր անձինք, թագադրութեան հանդէսը, զինուորական խաղեր և այլն և այլն։ Մի քանի համարներ մանաւանդ չատ հրաշալի էին.—ահա ձեր առաջ է Սև ծովը. նա ալեկոծվում է, ջրի ալիքները զարկվում են ժայռի կտորներին, և դուք մի բօսլէ մտանում էք, որ դա իսկական ծով չէ, այնքան հրաշալի է նմանութիւնը և բնական։ Ահա ձեզ մի պատկեր նեգրների կեանքից. մեծ լողարան է, մի քանի մակոյկներ անցնում են այս և այն կողմ, և անվեհեր նեգրները անագին խումբ թափվում է ջրի մէջ ահագին բարձրութիւնից. կամ ահա հեռուից գալիս է երկաթուղու գնացքը. կայարանի վրա աջ և ձախ շարժվում են կենդանի մարդիկ, բնական մեծութեամբ, բնական դիրքով. ահա և հեծելազօր գնդի ձիարշաւը. հեռաւորութեան վրա նշմարվում է նոյն իսկ ձիերի ոտների տակ բարձրացող փոշին, բոլոր մանրամասնութիւններով։ Խորհուրդ ենք տալիս մեր հասարակութեան օգտվել դէպքից և տեսնել այդ հետաքրքրական սէանսները, որոնք պէտք է կրկնվեն, ինչպէս լսեցինք, էլի երկու անգամ։

Ստացանք յօդուած Լէյպցիգի աղքատ ուսանողի (տես «Մշակ» № 144, 1896) հետեւեալ նոր նուէրները. 1) Սաբզվարից, Աւագ Մէլիք-Աբրահամեանից՝ 5 ր. 2) Նուխուց, ոմն, 3 ռուբլի. 3) Մելիտօպոլից, տ. Աշխէն Սամուէլեանցի միջոցով, 16 ռուբլի, որ նուիրել են՝ տ.տ. Հ. Չերնիկեան 3 ր., Տ. Չերնիկեան—3 ր., Ա. Մատինեան—3 ր., Ա. Սամուէլեան—2 ր., Ս. Արութեան 2 ր., Ի. Խաչատրեան—1 ր., Ե. Մոմճեան—1 ր., Յ. Անանեան—1 ր։ Գումարը 16 ռուբլի։ Ուրեմն նախկին 20 ռուբլու հետ այժմ ունենք՝ 44 ռուբլի։ Այդ գումարը այսօր ուղարկեցինք Լէյպցիգի հայ ճեմարանական ընկերութեան նախագահ Վ. Նալբանդեանցին, ըստ պատկանելոյն հասցնելու համար։ Սրանով էլ փակում ենք այդ հանգանակութիւնը։

Մեզ հաղորդում են, որ կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան տարեկան հանդիսաւոր նիստը տեղի կունենայ Զատկից յետոյ։ Այդ նիստում կընտրվի նախագահ հանգուցեալ կառավարչապետ Շերեմետեւի փոխարէն։

Գօրու գաւառում այժմ պատրաստվում է ամերիկեան վաղերի համար մի նոր արնկարան, որտեղից կը ստացվեն այնպիսի վաղեր, որոնք կարող կը լինեն դիմանալ ֆիլոկսերային և չը վնասվել նրանից։ Այս նոր անկարանը պէտք է զանազանվի Սակարայի արնկարանից այն բանով, որ այս վերջինից կարող են վաղ վերցնել միայն այն տեղերը, ուր արդէն ֆիլոկսերա կայ, իսկ նոր անկարանում պէտք է վաղեր բուսցնեն այն տեղերի համար, ուր ֆիլոկսերա չը կայ։ Նոր անկարանը գտնվում է Ադայեանի գիւղում։

ԱՐԴԱՀԱՆԻՑ մեզ գրում են. «Մարտի 14-ին, ուրբաթ օրը, երբ մեր մերձակայ գիւղերից ժողովված թուրք ազգաբնակութիւնը վերջացնում է իր աղօթքը, յանկարծ մզկիթի բագում յայտնվեցին երկու թիւրքիացի դէվրիշներ, որոնք անմիջապէս սկսեցին երգել սղոմութիւն խնդրող թափառականների պէս, առաջները փռելով մորթի։ Թուրքերը կարծես հէնց դրան էին ըսպասում. ամենքը սկսեցին դուրս գալ մզկիթից և մորթու վրա փողեր գցել։ Քիչ ժամանակ անցած, «սղոմութեան» երգը փոխվեց «հրաւիրական» երգի և սկսեցին յաւիտենական երգել՝ «Սանջակի չերիֆլար չիսսի գովլէթ կուվլէթլէնտի մէլէիգէրէնդի ջէնտէթ գափիլար աչլդի, փեղամբեր իչնի իլէնվ տուրիէրալ»։ Թուրքերը ժողովվում են դէվրիշների գլխին։ Սակայն չուտով ոտիկանութիւնը կալանաւորեց դրանց։ Միւս օրը քննութիւնից երևաց, որ դրանք խաբեբաներ են և կարդալ իսկ չեն իմանում։ Դրանց նմանների թիւը քիչ չէ մեր գաւառում, որոնք դրդում են թուրքերին»։

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ, Մկրտիչ քահանայ Տէր-Գրիգորեանց ուղարկել է մեզ տպագրելու հետեւեալը. «Մշակի 24-րդ համարում Կաղզուանից իմ մասին տպված է հետեւեալը. «Մկրտիչ քահանայ Տէր-Գրիգորեանի մի գաղթականի հետ ունեցած անվայել վարմունքի պատճառով, այստեղի վարչութեան անդամները հրաժարվեցին, բացի մէկից»։ Նախ կը խնդրէի հրաժարված անդամներից բացատրութիւն, թէ՝ արդեօք նրանք իմ պատճառով են հրաժարվել, թէ վարչութեան անդամներից մի ուրիշի պատճառով։ Երկրորդ՝ թէ ես մի գաղթականի հետ ունեցել եմ անվայել վարմունք, ապա չուտով մարմնաւոր իշխանութեան ձեռքով կատարած քննութիւնը կը պարզաբանէ, թէ արդեօք տեղի է ունեցել անվայել վարմունք իմ կողմից, թէ զրպարտութիւն է ուրիշների կողմից»։

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ գաւառի Հանդամէջ գիւղից մեզ գրում են. «Ձիւնը հալվելուն պէս, սկսվել են հին և խարխուլ տները փլվել։ Նորերս Հանդամէջ գիւղում մի թուրքի տուն կէս գիշերին փլում է և մի ամբողջ ընտանիք մնում է տակը։ Բարեբաղդաբար, հարևանները լսելով, չուտով օգնութեան են հասնում և ազատում նրանց փլատակների տակից»։

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են. «Այն յանձնաժողովը, որ կազմվել է ժանտախտի դէմ մաքառելու համար, իր նիստերից մէկում որոշեց բերել տալ հակաժանտախտային շիճուկ և, ինչպէս լսեցինք, արդէն այդ նպատակով դիմումն է եղել Թիֆլիս և Պետերբուրգ, որպէս զի ուղարկեն 50 սրուակ վերոյիշեալ դեղից»։

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Մարտի 25-ին, խանքենդ աւանի ռուսաց գերեզմանատան մօտ, անձնասպանութեամբ վերջ տուեց կեանքին, 33 տարեկան հասակում, երիտասարդ Տիգրան Սարգսեան Հաղլաթեանց։ Հանգուցեալը մարտի 23-ին Բագուից գալիս է Շուշի, միւս օրը գնում խանքենդի, որտեղ ընդունելով կարբոլեան թթու, մեռնում է։ Պատճառը անյայտ է։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թէ ինչպէս են վերաբերվում սուլթանը և իր պալատը Թոկատի կոտորածներին, այդ երևում է այն հանգամանքից, որ Թոկատի նահանգապետ է նշանակվել Բէհրի փաշան, որը ցեղով չերքէզ է և նոյն իսկ մահմեդականների մէջ վատ համբաւ է վայելում։ «Politische Corresp.» ասում է, որ եւրոպական դեսպանների վրա անհաճոյ տպաւորութիւն թողեց այդ նշանակումը։

Կ. Պոլսից հեռագրում են «Standard» լրագրին, որ սուլթանը դիմել է երիտասարդ-թիւրքերի պարագլուխներին և հետևեալ առաջարկութիւններն է արել թիւրքաց կայսրութեան մէջ ներքին բէֆորմներ մտցնելու վերաբերմամբ.—հաստատել մի սենատ, որի անդամներին կը նշանակի ինքն սուլթանը. կազմել կաբինէտը այնպիսի անձերից, որոնց չիտակութիւնը որ և է կասկածից բարձր է և որոնց կը նշանակի նոյնպէս սուլթանը. մամուլի համեմատական ազատութիւն. ժողովրդական լուսաւորութեան գործի վերանորոգութիւն։ Այդ առաջարկութեան երիտասարդ-թիւրքերը պատասխանեցին, որ իրանք հանդիսանում են լոկ ժողովրդի ներկայացուցիչներ և, հետևաբար, որ և է բէֆորմներ մտցնելուց առաջ, պէտք է հարցնել ժողովրդի կարծիքը։

Սուլթանի նորերս հրատարակած իրաղէն ոչ մի գոհացում չէ տալիս հայերին, որովհետև պատրիարքարանի որոշ պահանջներին սուլթանը պատասխանում է անորոշ ֆրազներով։ Միակ դրական զիջումը, որ արեց կառավարութիւնը—մահվան պատժին դատապարտված երեք հայերի ներումն է։ Կ. Պոլսի ոստիկանութիւնը սաստիկ յուզված է իր ստացած տեղեկութիւններից այն մասին, թէ արտաքսմանում, մանաւանդ Զէյնօվայում և Լօնդոնում գործող հայ կոմիտէները պատրաստվում են նոր ցոյցեր անել։ Այդ կոմիտէները շարունակում են իրանց գրգռումները Փոքր-Ասիայի հայերի մէջ, նոր խռովութիւններ առաջ բերելու նպատակով։ Մանաւանդ յուզիչ ընաւորութիւն ունեն Լօնդոնից ստացված հեռագիրները։ Այդ հեռագիրները հաղորդում են, որ յեղափոխականները մտադիր են վերսկսել սաստիկ ագիտացիա ապրիլի կիսին, երբ ձիւները կը հալվեն ասիական Թիւրքիայում։

«Одес. Листокъ» լրագիրը հաղորդում է հետեւեալը. «Անատոլիայից Կ. Պոլիս եկածները հաստատում են, որ այնտեղ, Իզմիրում և չըրջականերում, դարձեալ հայերի կոտորած է եղել և իբր թէ երեք օրվայ ընթացքում մի քանի հազար հոգի են սպանվել։ Այդ լուրերը, հաւանօրէն, չափազանցված են, բայց միւս կողմից, «չը կայ ծուխ առանց կրակի»։ Կ. Պոլսի մէջ յուզիչ լուրեր են պատում։ Խօսում են այն մասին, որ գաղտնի հայ յեղափոխական կոմիտէտը յարութիւն է առել և ուղարկել է յունաց դեսպանին առաջարկութիւն այն մասին, որ յոյները հայերի հետ միասին գործեն։ Կալանաւորված են չատ հայեր, որոնք յունական ըդգեսաներով և զրօշակներով կամենում էին յարձակում գործել թիւրքերի վրա»։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Հռոմից հաղորդում են մարտի 18-ից. «Երկիւղ կայ որ Սիրիայում քրիստոնեաները կը յարձակվեն թիւրքաց զօրքի վրա, որովհետև զայրացած քրիստոնեաները հաւաքվում են Երուսաղէմ՝ յայտնի պատերազմասիրական դիտաւորութիւններով»։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԿՐԵՏԷ

ԼՕՆԴՈՆ, 28 մարտի։ «Standard» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են. «Մինիստրների խորհուրդը համաձայնութիւն յայտնեց հեռացնել Կրետէից թիւրքաց զօրքերը այն պայմանով, որ պետութիւնները երաշխաւորեն նախապէս կըզուց հեռացնելու յունական զօրքերը և խաղաղութիւն հաստատեն այնտեղ։»

ԼՕՆԴՕՆ, 28 մարտի։ Համայնքների ժողով։ Կէրզոն յայտնեց. Ֆրանսիայի պաշտօնական առաջարկութիւնների մասին՝ Թիւրքերին Կրետէից չուտով հեռացնելու վերաբերմամբ՝ կառավարութեան ոչինչ յայտնի չէ։ Ֆրանսիան միայն ցանկացաւ իմանալ ուրիշ պետութիւնների կարծիքը այդ առարկայի վերաբերմամբ։ Ներկայումս չէ կարելի ասել, թէ երբ կղզուց կը հեռանան Թիւրքերը։ Մի քանի պետութիւններ այն կարծիքը յայտնեցին, թէ առաջ յոյները պէտք է հեռանան կղզուց, որից կարելի է հետևցնել, որ առաջին քայլը պարտաւոր է անել Թիւրքիան։

ԿԱՆԷՑԱ 28, մարտի։ Սուդի ծովածոցը, մի փոքր կրէյսերի ուղեկցութեամբ, մաուր ռուսաց չոգենաւը հեռակայ զօրքի մի բատալիոնով և վեց թնդանօթներով։

ՅԷՏԻՆԻԷ, 28 մարտի։ Սկուտարիից ստացված տեղեկութիւնների համեմատ, հաւաքված մահմեդականները սկսում են հայրենիք վերադառնալ։ Առևտուրը բաղարում վերսկսվեց։

ՏՈՒԼՕՆ, 29 մարտի։ Կանէից հեռագրում են. «Որովհետև երէկ Կիսամօում յոյները մտադրվում էին զինադրել տեղական բերդապահ զօրքի այն օֆիցէրների և զինուորների ափ իջնելուն, որոնք նաւակներով մօտեցել էին ափին անդլիական և աւստրիական զրօշակների տակ, այդ պատճառով աւստրիական «Կրոնպրինցուհի Ստեֆանիա» զրահակիրը սկսեց ռմբակոծել յոյների դիրքը։ Վաղ առաւօտեանից լսվում է թնդանօթների որոտը Կիսամօի կողմից, ուր այսօր պէտք է նաւերը նստեցնեն Թիւրք ընտանիքներ՝ նրանց Կանէյա փոխադրելու համար։»

ԼՕՆԴՕՆ, 29 մարտի։ «Times» լրագրին կ. Պոլսից հեռագրում են. «Անցեալ շաբաթ Բ. Դուռը արտաքսմանեան իր ներկայացուցիչներին երեք շրջաբերական ուղարկեց, որոնց մէջ պահանջում է հեռացնել յունական զօրքերը Կրետէ կղզուց և գանգատվում է, որ անարդար են վերաբերվում այնտեղի մահմեդականներին, որոնց զինաթափ են անում, այն ինչ մի և նոյն ժամանակ քրիստոնեաներին թոյլ է տրված պահպանել զէնքը։»

Կանէից «Daily News» լրագրի ստացած տեղեկութիւնների համեմատ, ռուսաց «Կայսր Ալէքսանդր II» նաւը գնում է Սուդից՝ բերելու Բէտիմօ ռուսաց հիւպատոսին, որը ցանկանում է տեսակցել կրետական ապստամբների պարագլուխների հետ՝ ինքնավարութեան օգուտները բացատրելու նրանց։ Ռուսաց «Կայսր Նիկոլայ I» նաւը գնում է Զմիւռնիա՝ մթերք և ածուխ վերցնելու համար։ Աւստրիական «Կրոնպրինցուհի Ստեֆանիա» պատերազմական նաւի կապիտանը ստացաւ Կիսամօի ապստամբներից մի նամակ, որի մէջ նրանք յայտնում են, որ եթէ պետութիւնները թշնամական միջոցներ ձեռք կառնեն, ապստամբները այնպէս կը վարվեն, որպէս թէ իրանք պատերազմ լինեն վարելիս նրանց հետ։ Ժամ առ ժամ կռիւ է սպասվում։ Վաղը աւստրիական ծովապետը ճանապարհ է ընկնում Կիսամօ։»

Կ. ՊՕԼԻՍ, 29 մարտի։ Բ. Դուռը հաղորդեց դեսպաններին, որ յանձնաժողովը թօքատում կալանաւորեց 250 մարդ՝ խառնակութիւններին մասնակցելու համար։ Ապա Բ. Դուռը առաջադրութիւն արաւ դեսպաններին՝ յունա-կրետական գործում պետութիւնների միջամտութիւնը չտապեցնելու, որպէս զի Թիւրքերը ստիպված չը լինեն գործող զօրքը չատ երկար պահել։ Եթէ միջամտութիւնը, իր երկարատևութեամբ խախտելով Թիւրքիայի բարձրագոյն իրաւունքները, անաջող դուրս գայ, Թիւրքիան խնդրում է գործունէութեան ազատութիւն։ Վերջաբանութեան մէջ ցանկութիւն է յայտնված, որպէս զի Կրետէի ինքնավարութիւնը չը խախտէ Թիւրքիայի բարձրագոյն իրաւունքների ամբողջութիւնը։ Նաւատորմերի հրամանատարը Կրետէի մօտ, խաղաղացման տեսակէտից, պահանջում է, որ մահմեդական փախստականները հեռացվեն նաւահանգստային քաղաքներից։

ԼՕՆԴՕՆ, 30 մարտի։ «Times» լրագրին կանէից հեռագրում են, որ Կիսամօ գալուց յետոյ աւստրիական ծովապետը բրիտանական և աւստրիական նաւերից նաւակներ ուղարկեց մահմեդական փախստականների համար։ Երբ նաւակները մօտեցան ափին, ապստամբները մի քանի անգամ թնդանօթներ արձակեցին։ Պատերազմական նաւերը սկսեցին ռմբակոծութիւնը, որի ժամանակ 80 ռումբեր արձակեցին։ Մօտ 30 մահմեդական կանայք և երեխաներ վազեցին դէպի ափը և նստեցին նաւակները, որոնց ապստամբները գնդակահարում էին։ Կարծում են, որ սպանված են չատ ապստամբներ։

ԼՕՆԴՕՆ, 30 մարտի։ Էլասօնից հեռագրում են, որ յոյն կամաւորների խմբեր ոտք դրին Թիւրքաց հողի վրա, Գրէվենայի մօտ։ Թիւրքաց զօրքերը գնդակահարում էին։ Կռիւը շարունակվում է։ Էդհէմ-փաշան հրաման արձակեց պատրաստվել ամեն բանի։

ԷԼԱՍՕՆԱ, 30 մարտի։ Թիւրքաց զօրքերի հրամանատարը Թէսալիայում՝ Էդհէմ-փաշան հրաման ստացաւ անցնել զօրքով յունաց սահմանը, եթէ կը տեսնվի, որ Թիւրքաց հողի վրա ներս խուժող յոյների մէջ գտնվում էին յունաց կանոնաւոր զօրքերը։ Թիւրքաց զօրքերը չարունակում են յունաց աւաղակախմբերի դէմ գնալ, որոնք չատով երեք կրակի մէջտեղ կը գտնվեն։ Ստացվող տեղեկութիւններից երևում է, որ թշնամական գործողութիւնների բռնկումն է սկսվել յունաց անկանոն խմբերի և Թիւրքաց զօրքերի մէջ։ Էդհէմ-փաշան չուտով հրաման կը տայ, որ անյապաղ չարժվեն Թիւրքաց զօրքերը։ Ցարձակվողների չարքերում նկատվում էին յունական համազգեստներ։ Դրութիւնը չափազանց լուրջ է համարվում։

Կ. ՊՕԼԻՍ, 30 մարտի։ Թիւրքաց գլխաւոր շտաբի հեռագիրը տեղեկացնում է, որ յունական անկանոն աւազակախումբը ներս խուժեց օսմանեան հողը Մետցարօի ուղղութեամբ։ Օսմանեան գլխաւոր շտաբը ձեռք առաւ բոլոր անհրաժեշտ միջոցները՝ չրջապատելու համար աւազակախումբը՝ երբ նա սարից կիջնի և յետ մղելու նրան դէպի յունական ցամաքը։ Պաշտօնական հեռագիրները չեն յիշատակում ոչ մի ընդհարման մասին Թիւրքաց զօրքերի և յունաց աւազակախմբի մէջ։

Կ. ՊՕԼԻՍ, 30 մարտի։ Դրութիւնը Սկուտարիում հանգիստ է. բաղարը կրկին բացված է, բայց զգուշութեան ձեռք առած միջոցները չարունակվում են։

Սերբիական և բուլգարական դիպլոմատիական գործակալները հաւատացրին սուլթանին, որ եթէ Յունաստանը սկսի պատերազմը, Սերբիան և Բուլգարիան հանգիստ կը մնան։

Կ. ՊՕԼԻՍ, 31 մարտի, Էդհէմ-փաշան հեռագրում է, որ յունաց զօրքերը մարտի 29-ին անցան սահմանը։ Թնդանօթաձգութեամբ քարուքանդ արին մարակոցը Բալտիմօում և այրեցին պահակատները։ Բ. Դուռը պատասխանատուութիւնը դցում է յոյների վրա՝ թշնամական դրութիւն առաջ բերելու համար։

Կ. ՊՕԼԻՍ, 31 մարտի։ Երէկ տարածվեց մի լուրիւր, որ նկարագրում է քրիստոնեաների խառութիւնները մահմեդականների դէմ և հրաւէր է կարդում վրէժխնդիր լինել։ Կաւառներից ստացված տեղեկութիւնները միաձայն հաստատում են, որ մահմեդականները չատ սպառնական տրամադրութիւն ունեն։ Կ. Պօլսում նոյնպէս նկատվում է Թիւրքերի յուզմունք։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 մարտի։ Թագաւոր Կայսրը բարեհաճեց ուշադրութիւն դարձնել ամենաբարձրագոյն ընծաների առաջ բանակութեան վրա, այն է սուրբերի պատկերներ թանգագին պատեանների, թանգագին սկուտեղներ և այլ առարկաներ։ Թագաւորը, ուղղված կերպով վերաբերվելով հաւատարիմ հպատակութեան զգացումների ամեն տեսակ արտայայտութիւններին և չը ցանկանալով տրամեցնել ընծաներ մատուցողներին մերժելով, ուղղված կերպով ընդունում էր ընծաները։ Այժմ, ի նկատի ունենալով այդ ընծաների վրա ծախսվող նշանաւոր գումարները, Թագաւորը հրամայեց յայտնել, որ Իր որդի համար միակ ուրախալի ընծան այն նուիրատուութիւնները կը լինեն, որ կանեն հասարակութիւնները և մանաւոր անձինք բարեգործական և այլ հանրօգուտ հիմնարկութիւնների համար, և մանաւանդ առաւելապէս տեղականների համար։

ՍՕՖԻԱ, 28 մարտի։ Սուլթանը հրաւիրեց իշխանին և իշխանուհուն դալ Կ. Պօլիս։

Կ. ՊՕԼԻՍ, 30 մարտի։ Տիեզերական պատրիարքի ընտրութիւնը նշանակված է չորեքշաբթի, որպէս զի ընտրվածը կարողանայ ներկայանալ սուլթանին մինչև Զատիկ։

ՍՕՖԻԱ, 30 մարտի։ Սուլթանի իրադէն՝ սերբական դպրոց բանալու մասին Պրիլիպսում (Մակեդոնիայում) մեծ յուզմունք է առաջացնում։ Բուլգարները վճռեցին զրկել սուրբ խորհուրդներից իրանց այն համաքաղաքացիներին, որոնք իրանց երեխաներին կուղարկեն այդ դպրոցը։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մարտի 28-ին

Լօնդոնի վրա	10 ֆունտ արժէ.	. .	94	ր. — կ»
Բերլինի վրա	100 մարկ	— . .	45	»97½»
Պարիզի վրա	100 ֆրանկ	— . .	37	»32½»
Ոսկի	— —	արժէ . .	—	» — »
Մաքսային կուպօններ		— . .	149	» — »
Բօրսային դիսկոնտ		— . .	5½	—7% »
4% պետական բէնտա		. . . . .	99	» — »
Ներքին 5% առաջին փոխառութ.			277¾	» — »
— — երկրորդ		—	245	» — »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի			211¾	» — »
5% պետական երկաթուղ. բէնտա			—	» — »
4% ներքին փոխառութեան		. .	98¾	» — »
4½% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի			101½	» — »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.			—	» — »
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի			101½	» — »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մեռալ.		.	—	» — »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.			101¼	» — »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.			101¼	» — »
Օդէսայի	—	—	100¼	» — »
Թիֆլիսի	—	—	98¾	» — »
Թիֆլիսի կալ. բանկի 6%		— . .	102	» —
5%	—	— — . .	99⅝	» — »
Ռուժայիսի	—	— — . .	102	» — »
5%	—	— — . .	99⅛	» — »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, վ. օրօնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և ներքին հիւանդութիւնների։
Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ՐՈՒԴԵՆԿՕ—10—11 ժ. կանանց և երեխայոց հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. կանանց հ. չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ, իսկ 1½—2 ժ. երկուշաբթի, երեքշաբթի և հինգշաբթի։
Ի. Ֆ ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեք. հինգշ. և շաբաթ։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ։
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6½—7½ ժ.
Հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հեռադիտութիւններ են անում մէզի, խիպ, արեան, կաթի և այլն։
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ՏԻԿԻՆ ՊՐԻՎԵՏԵՐԱ—ՊԱՐՎԻՍ
ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ
Դասեր է տալիս։ Հասցէն՝ Ստարայա-Արբենալնայա, № 29, բաղում։ (№ 37) 2—5

Զգուշացրէք կեղծու�երից
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ
Գ. Ֆ. ԻԻՐԳԷՆՍ
Ոչնչացնում է պեպէնները, սեռութիւնը, դէղին բծերը, պուզիկները և պտուկները և ներգործում է աւելորդ քրտնելու դէմ։ Խորհուրդ է տրվում ձեռք բերել, որպէս տաւալէտային անուշահոտ սապօն, բարձր արժանաւորութեան։
ՈՍԿԷ ՄԷԴԱԼ 1893 թ-ի համար։
Կտորի գինը 50 կ., ½ կտորի 30 կ.։
Ծախվում է բոլոր ամենալաւ դեղագործական մագազիններում և դեղատներում։
Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. Իւրգէնսի մօտ Մոսկվայում։
Դէպօ, Թիֆլիսում, Ագմուրովի մօտ, դեղագործական ապրանքների առևտրի կովկասեան ընկերութեան մէջ, Ծուրինովի և Դրիվնակի, պ.պ. Պոպօվների և Արիստակովի մօտ։
(№ 11) 5—24

ՄԱՍՍԱԺ
Բժիշկների ղեկավարութեան տակ, պարապում եմ դանազան հիւանդութիւնների բժշկելով, ՄԱՍԱԺՈՎ, և առողջական ԳԻՄՆԱՍՏԻԿԱՑՈՎ։
Հիւանդների ընդունելութիւնը՝ 5½—6½ ժամը երեկոյեան։ Աւշլեան փողոց, № 19։
27—148 ԳԷՈՐԳ ԹՈՍՈՎԵԱՆՑ

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՍԱՐԱԼՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսուն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, ապրիլ ամսի 2/14-ին ԱՐՄԷՆԻ չոգենաւը, նաւապետ ԲՈՒԼ, և այդպէս չարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ճաշից յետոյ։ Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից
Պակաս գներով։ Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիոնի փող. նախկին Արծրունու քարվանսարա։ ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլդարեանին, Կօլիւբակինսկայա հրապարակ։ ՆՈՎՈՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիոր Հերչինրօզերին։ (№ 16) 2—20

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ
մեծադիր և չատ աջող պատկերը ՃԵՆԱՊԱԿՈՒ ՎՐԱ (на фарфорѣ) պատրաստված Լօնդոնում («Ադրիւր-Տարազի» հրատարակութիւն) բացառապէս վաճառվում է Յովհաննէս Տէր-Սարգսեանի թղթավաճառանոցում։
Պատկերն ունի յենարան և պէտք չունի շրջանակի, չատ չքեղ զարդ է ամեն հայի տան համար։
ԳԻՆԸ 3 ՐՈՒԲԼԻ։ «Մշակի» կովկասեան բաժանորդները ճանապարհածախս չեն վճարում։
Հասցէն՝ ТИФЛИСЪ, И. С. Теръ-Саркисьянъ, магазинъ, Дворцовая улица. (№ 31) 7—10

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ
ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ
(Տնային գործածութեան համար)
ՀՆԴԿԱԿԱՆ ՄԻՇՈՒՆԱ, այն է հաստատ մահ մկներին, խլուրդներին և ուրիշ կրծողներին։ Այս միջոցը արտաքսում է այդ կենդանիներին գլխաւորապէս բնակարաններից, այնպէս որ նրանք չեն մնում գետնայարկի տակ և չեն տարածում գարշահոտութիւն։
ՄԼԱԿՆԵՐԻ ԴԷՄ ՀԵՂՈՒԿ, ոչնչացնում է նրանց ընդմիշտ։ Նա չատ հաճելի հոտ ունի և բիծ չէ թողնում ճերմակեղէնի, կօշիկների և կարասիքի վրա։ Փոշիացնելով նրան, սենեակի օդին հաճելի թարմութիւն են հաղորդում և միաժամանակ հալածում են ցեցը, ճանճը և մոծակները։
ՓՈՇԻ՝ ՄԻԶԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ամենայարմար միջոցն է բոլոր միջատները և նրանց սաղմերը բոլորովին ոչնչացնելու համար։ Այդ փոշին անփոխարինելի է լուեր և մլակներ ոչնչացնելու համար անկողիններում, ներքնակներում, թաղիքով պատած փայտային պատերում։ Ոչնչացնելով ցեցը և չամենալով նաֆթալինի անհաճոյ հոտը, այս փոշին բոլորովին փոխարինում է նրան. դրա համար հարկաւորութիւն չը կայ ամառը տալ մուշտակները և ուրիշ մորթեղէն իրերը պահելու համար։ Փոշու ազդեցութիւնը, երբ նրան գործադրում են ամեն տեսակ միջատների, մրջիւնների դէմ—գրեթէ վայրկենական է—հետևանքը զարմանալի։ Հարցնել դեղավաճառական խանութներում։
(№ 23) 31—50

ԲԱՑՈՒԱԾ Է 1897 ԹԻ
„ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅԻ“
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
«Հանդէս Ամսօրեայ» ուսումնական թերթը կը մտնի իր գոյութեան 11-դ չրջանը և կը հրատարակուի ամեն ամսոյ սկիզբը՝ նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ։ «Հանդէս Ամսօրեայն» պահելով հանդերձ նոյն ծաւալն՝ որ է երկու մեծադիր թերթ, պիտի բովանդակէ այն ամեն հետաքրքրական, հմտալից յօդուածներն, որ կը հային հայ գրականութեան։
Տարեկան գինը Ռուսաստանում 4 ռուբլի
Խմբագրութեան հասցէն՝ A la Rédaction de la Revue «Hantess» VIENNE (Autriche) VII/2 Mechitharistengasse 4. 3—4

Дозволено цензурою, Тифлисъ, 31 Марта 1897 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.